ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
Հանրային հեռուստաընկերության «Հարցազրույց.Պետրոս Ղազարյանի հետ» հաղորդման վերաբերյալ

2023 թ. փետրվարի 23-ին Հանրային հեռարձակողի խորհուրդը քննարկել է Հանրային հեռուստաընկերության «Հարցազրույց. Պետրոս Ղազարյանի հետ» (17.02.2023) հաղորդման ընթացքում տեղի ունեցած միջադեպը և լսել գործադիր տնօրենի պարզաբանումները:

Հաղորդման հյուրը, «Երկրապահ կամավորականների միության» նախագահ Սասուն Միքայելյանը, տեսագրության ժամանակ օգտագործել է արտահայտություններ (ենթադրաբար՝ ոչ նորմատիվային բառապաշար), որոնք հաղորդման պատասխանատուները եթեր հեռարձակելուց առաջ խլացրել են ձայնային ազդանշանով:

Հանրային հեռարձակողի խորհուրդը քննության է առել հեռուստաընկերության ձեռնարկած քայլերը՝ եթերում իրավական և էթիկական նորմերը պահպանելու տեսանկյունից ու հանգել է հետևյալ եզրակացության:

Թեև եթերում չի հնչել որևէ հայհոյանք, սակայն այդպիսի համոզմունք է ստեղծվել հենց ձայնային միջամտության փաստով: Ձեռնարկած խմբագրական միջոցները առերևույթ չեն կանխել, այլ հաստատել են անթույլատրելի բառապաշարի օգտագործումը հեռուստաընկերության տաղավարում: Այս դեպքում խնդրահարույց է դառնում հաղորդավարի հանդուրժող լռությունը նման խոսքի նկատմամբ:

Խորհրդի անդամները միաձայն եզրակացնում են, որ հաղորդման պատասխանատուները ստեղծված իրավիճակում կիրառել են ոչ լավագույն լուծումը:

Ելնելով վերոնշյալից, Հանրային հեռարձակողի խորհուրդը հորդորում է Հանրային հեռուստաընկերությանը ստեղծել, հաստատել, հրապարակել և այսուհետ կիրառել Խմբագրական ուղեցույց, որտեղ հստակ նշված կլինեն նման իրավիճակներում պատասխանատու խմբագրի և հաղորդավարի գործողությունները, որոնք կբացառեն Հանրային հեռուստաընկերության եթերում հայհոյախոսությունը, միաժամանակ պահպանելով խոսքի ազատության, լրագրողական էթիկայի և արհեստավարժության բարձր չափանիշները:

Հանրային հեռարձակողի խորհուրդ